




ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ



ույն թվի փետրվարի 4-ին, 79 տարեկան հասակում, վախճանվեց ականավոր պատմաբան ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանը:

Հանգուցյալը ծնվել է Ախալցխայում 1873 թ.: 1893 թ. ավարտելով Թբիլիսիի կլասիկ գիմնազիան, մտնում է Իենայի համալսարանը՝ մասնագիտանալով արևելագիտության մեջ: 1897 թ. ավարտում է համալսարանի լրիվ դասընթացը և պաշտպանում դիսերտացիա՝ „Beiträge zur Albanischen Geschichte“

թեմայով, որի համար շնորհվում է նրան փիլիսոփայության դոկտորի աստիճան: Չքավարարվելով իր ստացած կրթությամբ, նա, ինքնապատրաստությամբ, խորացնում է իր մասնագիտությունը և 1898 թ. պետական քննություն հանձնում Պետերբուրգի համալսարանի Արևելյան ֆակուլտետում՝ ստանալով առաջին կարգի դիպլոմ:

Հաջորդ տարին՝ 1899 թվին, հանգուցյալը հրավիրվում է Էջմիածնի հոգևոր ճեմարանը որպես հունարենի, գերմաներենի, հունական գրականության և փիլիսոփայության դասախոս: Այստեղ նա պաշտոնավարում է մինչև 1905 թվականը: 1906 թվին նա տեղափոխվում է Թբիլիսի և աշխատում 1-ին և 2-րդ կլասիկ գիմնազիաներում որ-

պես գերմաներենի, հայերենի և հայ գրականության դասատու:

Դասատուական աշխատանքի շնչին վարձատրությունը չի ապահովում հանգուցյալի նյութական կարիքները, ուստի և նա հարկադրված է լինում քննություն հանձնել Յուրեի համալսարանի (Դորպատ, այժմ՝ Տարտու, էստոնական ՍՍՌ) իրավաբանա-

կան ֆակուլտետում և իրավունք է ստանում պաշտոնավարելու պետական դատական հիմնարկներում, 1909—19 թ. թ. նա աշխատում է Բաքվի շրջանային դատարանում որպես երգվյալ հավատարմատար: Միաժամանակ, Բաքվի Առևտրական ուսումնարանում նա դասավանդում է քաղաքատնտեսություն: 1911—13 թ. թ. նա դասախոսություններ է կարդում նաև Բաքվում կազմակերպված այսպես կոչված ժողովրդական համալսարանում:

Սկսած 1911 թվից, աշխատանքից ազատ ժամերին, նա սկսում է զբաղվել հայագիտական ուսումնասիրություններով, որոնց արդյունքն է լինում 1911 թ. Կալեբրական Գիտական Ակադեմիայում հրապարակված «Մեկնութիւն ստորագրութեանցն Արիստոտելի ընծայեալ, Ելիասի իմաստասիրի» աշխատությունը: Մինչ այդ՝ 1903 թ. Մարբուրգում, լույս էր տեսել նրա „Nonnos, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz“ և 1904 թ. Վաղարշապատում՝



դրանքն է լինում 1911 թ. Կալեբրական Գիտական Ակադեմիայում հրապարակված «Մեկնութիւն ստորագրութեանցն Արիստոտելի ընծայեալ, Ելիասի իմաստասիրի» աշխատությունը: Մինչ այդ՝ 1903 թ. Մարբուրգում, լույս էր տեսել նրա „Nonnos, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz“ և 1904 թ. Վաղարշապատում՝

«Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» աշխատությունները:

Նյութական միջոցների կարիքը և հայագիտական աշխատանքների նկատմամբ եղած անտարբերությունը նախաստվետական շրջանում հնարավորություն չէին տալիս հանգուցյալին ծավալելու իր հետադուտական աշխատանքները և դրսևորելու իր ունակությունները: Այդ հնարավորությունները նա ստանում է սովետական կարգերը հաստատվելուց հետո:

1920 թ. Հայկական ՍՍՏԽ կառավարության կողմից, նա հրավիրվում է Երևան, որպես նորարաց Պետական համալսարանի ռեկտոր: Հետագայում նա համալսարանում պաշտոնավարում է նաև, որպես Պատմագրական ֆակուլտետի ղեկավար:

Մանանդյանը շուտով, իր մեծարժեք գիտական ուսումնասիրություններով, ձեռք է բերում մեծ համբավ ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև ամբողջ Սովետական Միության պատմագիտության ասպարեզում:

Ականավոր պատմաբանի սովետական շրջանում հրատարակած առաջին լուրջ աշխատանքն է հանդիսանում «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» ուսումնասիրությունը, որը նրա 1921 թ. կարդացած դասախոսությունն է՝ ձեռագրի իրավունքով լույս տեսած Երևանում 1922 թ.:

Այնուհետև, Մանանդյանը, իրար հետևից, հրատարակում է մի շարք ուսումնասիրություններ, որոնք մեծ մասամբ նվիրված են նախարարական Հայաստանի սոցիալական և տնտեսական կյանքին, մի ասպարեզ, որը մինչ այդ բոլորովին աչքաթող էր արված հայագիտության մեջ: Այս շարքի ուսումնասիրություններից առանձնապես պետք է նշել նրա «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարդկանության շրջանում» աշխատությունը:

1926—31 թ. թ. Մանանդյանը ղեկավարում է Հայկական ՍՍՏԽ-ի Գիտության և Արվեստի ինստիտուտի պատմա-հասարակական սեկցիան՝ որպես գիտական քարտուղար:

Մանանդյանը պատմաբան էր լայն իմաստով, նա չէր սահմանափակվում պատմագրության որևէ նեղ շրջանակով, այլ, լայնորեն ուսումնասիրում և լուծում էր Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի հետ կապված բազմատեսակ առեղծվածները, կապված մեր հարևան ժողովուրդների պատմության հետ: Այդ տեսակետից խոշոր նշականություն ունեն նրա շափաղակալան,

ճանապարհների ու վայրերի տեղագրության, ռազմական արշավանքների ուղղությունների հետ կապված ուսումնասիրությունները:

Հանգուցյալը գիտական խոշոր ծառայություն է մատուցել Հայաստանի հելլենիստական վիմագիր արձանագրությունների վերծանման և լուսաբանման ուղղությամբ (Արմավիրի և Գառնիի վիմագիր արձանագրությունները):

Նրա հին և միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքին նվիրված ամփոփող ուսումնասիրությունը հանդիսացավ «О торговле и городах Армении» (Հայաստանի առևտրի և քաղաքների մասին) մենագրությունը, որը լավագույն տեղեկատվություն է Հայաստանի և առհասարակ Կովկասի և Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքի պատմության համար:

Հանգուցյալի վարկեր ուսումնասիրություններից մեկն է հանդիսանում «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատությունը, որ մատենագրական կոնկրետ տեղեկությունների հիման վրա քննության են առնված առևտրական հարաբերությունները հայ ժողովրդի պատմության մեջ:

Հայագիտության մեջ խոշոր գիտական ավանդ է հանդիսանում նրա «Տիրության 2-րդ և Հոռմը» խորագրով աշխատությունը: Այս կարևոր մենագրության մեջ Մանանդյանը մերժում է եվրոպական գիտնականների (Մոմզեն, Ռեյնակ, Ֆերերո և այլոց) սխալ կարծիքը Հայաստանի մասին՝ որպես Հոռմին կցված երկրորդական մի պետություն: Պատմական անվիճելի փաստերի հիման վրա նա ցույց է տալիս, որ Հայաստանը Արտաշեսյան հարստության ժամանակաշրջանում Արևելքի հզորագույն պետություններից մեկն էր, ուներ զարգացած առևտուր, արհեստներ և արդյունաբերություն: Նա շատ հաջող ցույց է տվել նաև ազատասեր հայ ժողովրդի հերոսական պայքարը հռոմեական ագրեսորների դեմ:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի հայագիտական ուսումնասիրությունների ամփոփումը ղեկավարված է եղել Կոմարտով «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության մեջ, որի առաջին հատորը լույս տեսավ 1945 թ., իսկ 3-րդ հատորը մամուլի տակ է: Առաջին հատորում արված է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Արշակունիների թագավորությունը (66 թ.):

Պատմական գիտությանը մատուցած խոշոր ծառայությունների համար, հանգուցյալ Մանանդյանը բարձր գնահատության է արժանացել հասարակական գիտական լայն

ըրջանների և կառավարության կողմից: 1935 թվին Հայկական ՍՍՌ Կենտրոնական Նախագահության կողմից նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 1939 թ. նա ընտրվել է Համամիութենական Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ: 1943 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման ժամանակ, նա ընտրվել է մեր ակադեմիայի իսկական անդամ: Պարգևատրված է «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով:

Ակադեմիկոս Մանանդյանը խոշոր աշխատանք է կատարել նաև երիտասարդ մասնագետների պատրաստման ու աճեցման

ընթացավառում: Մեր ռեսպուբլիկայի պատմաբանների մեծ մասը նրա աշակերտներն են:

Հանգուցյալը թողել է իր կտակը, ըստ որի, իր գիտական հարուստ գրադարանը, շուրջ 2200 ամուսն գիրք, պիտի հանձնվի Մյասնիկյանի անվան Հանրային Գրադարանին, իսկ իր արխիվը և 2 միջնադարյան հայկական ձեռագիր՝ Հայկական ՍՍՌ Մատենադարանին:

Մեծանուն պատմաբանի հիշատակը միշտ անմոռաց կմնա բոլոր նրանց համար, ովքեր ճանաչում էին մեծանուն գիտնականին և ծանոթ են նրա մեծարժեք ուսումնասիրությունների հետ:

Բ Ի Բ Լ Ո Գ Ր Ա Ց Ի Ա

ԱԿ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Beiträge zur Albanischen Geschichte, Inaugural-Dissertation zur Erlangung der philosophischen Doktorwürde, Leipzig, 1897,
2. Հայոց նոր վկաները, գիտական հրատարակություն, աշխատություն 2. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903 թ.,
3. Հայոց նոր վկաները, հատ. Ա և Բ, կազմեցին Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Վաղարշապատ, 1903 թ.,
4. Nonnos, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, hrsgg. von A. Manandian, Marburg, 1903. նույնը հայադիտության հանդեսում՝ Zeitschrift für armenische Philologie, Bd. 1, էջ 220—272 և էջ 273—300 (drittes und viertes Heft, 1903).
5. Die neue Numerierung der in Kareneans katalog verzeichneten Handschriften. Zusammen-gestellt von A. Manandian (հնա հայադիտության հանդեսում՝ Zeitschrift für armenische Philologie, Bd. II, erstes Heft. Marburg, 1903, էջ 29—40).
6. «Քաղվածքների նվազեցում Կեսարացու բրոնզեկոնից մի հին ձեռագրում», Վիեննա, 1905 (Տե՛ս նույնը «Հանդէս Ամսօրեայ» 1905 թ., 2 հունվար, էջ 15—19),
7. «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանություն», Վաղարշապատ, 1904 թ. (Տե՛ս նույնը «Արարատ» ամսագիր, 1904, փետր. հունիս և հուլիս),
8. «Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտելի ընծայեալ Նիկասի իմաստասիրի, ի լոյս կած Յ. Մանանդեան»,
9. «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», դասախոսություններ՝ կարգադրված Երևանի ժող. համալսարանում 1921 թվին, ձեռագրի իրավունքով, Երևան, 1922 թ.,
10. «Գիտությունների հին Հայաստանի շինականների գրության մասին մարդագիտության շրջանում», Երևան, 1925 թ. (Տե՛ս նույնը «Պետ. Համալսարանի գիտական Տեղեկագիր» № 1, Երևան, 1925 թ., էջ 3—45),
11. Հայաստանի արքունի հարկերը մարդագիտության շրջանում, Երևան, 1926 թ. (Տե՛ս նույնը «Գիտությունների և արվեստի տեղեկագիր» № 1, Երևան, 1926 թ., էջ 3—44),
12. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, I պրակ, Երևան, 1927 թ. (Տե՛ս նույնը «Գիտության և արվեստի տեղեկագիր» № 2, Երևան, 1927 թ., էջ 29—42),
13. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II պրակ, Երևան, 1928 թ. (Տե՛ս նույնը «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր» № 4, Երևան, 1928 թ., էջ 43—82),
14. «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928 թ. (Տե՛ս նույնը «Հանդէս Ամսօրեայ», 1925, 1926, 1927 և 1928 թ. թ.),
15. Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata Tigranocerta ըստ Պետրոսյանի քարտեզի, Երևան, 1930 թ. (Տե՛ս նույնը «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի» № 5, Երևան, 1931 թ., էջ 65—87),
16. Կշիռները և շափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930 թ., էջ 3—141,
17. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Госиздат, Эривань, 1930 г.
18. Заметки о феоде и феодалном войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932 г.
19. Մանր հետազոտություններ— 1. Պեմսինգերյան քարտեզի Hariza կայարանը. 2. նույնը գերմաներեն համառոտ Die Station Hariza der Peuntingerschen Tafel. 3. Արարական արշավանքները

- Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ), Երևան, 1932 թ.
20. Խորենացու առեղծվածի լուծումը, թեղիսներ Կուտուրայի Պատմության ինստիտուտում կարդացված զեկուցման, Երևան, 1933 թ.
 21. Երատոսթենեսի ստադիոնը և Պարսից ասպարեզը: 1. Հայերեն, 2. Նույնը գերմաներեն ընդարձակ՝ Das Eratosthenische Stadion und der persische Asparez, Երևան, 1934 թ.
 22. Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Երևան, 1934 թ.
 23. Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934 թ.
 24. Средневековый итнерарий в армянской рукописи X столетия. տես աղակիմ. Մատին Խիրիված ժողովածուի մեջ՝ Академия наук СССР академику Н. Я. Марру, Москва—Ленинград, 1935 г.
 25. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեկտինգերյան քարտեզի, Երևան, 1936 թ.
 26. Թէոփնյա լաղազու ճարտասանական կրթութեանց, հանդերձ լոյն բնագրով, աշխատությանը Հակոբ Մանանդյանի, Երևան, 1938 թ.
 27. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939 թ.
 28. Народные восстания в Армении против арабского владычества, перевод с армянского, изд. Гос. университета, Ереван, 1939 г.
 29. Круговой путь Помпея в Закавказье, «Вестник древней истории», Москва, 1939, № 4, стр. 70—82.
 30. Возрожденная Армения, «Советская наука», Москва 1939 г., № 12. стр. 141—145).
 31. Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940 թ.
 32. Тигран второй и Рим, перевод с армянского, издание Арм. ФАН-а, Ереван, 1941 г., стр. 5—240.
 33. Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940 թ.
 34. Актуальные вопросы историографии древней Армении. «Историк Марксист», Москва, 1940 г., № 6, стр. 3—8.
 35. Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, «Вестник древней истории», Москва, 1940 г., № 3—4, стр. 89—100.
 36. Краткий обзор истории древней Армении, Москва—Ленинград, 1943 г.
 37. Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941 г.
 38. Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի բանի պրոբլեմների մասին, Երևան, 1944 թ.
 39. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա. Հրատարակություն Հայկո-հրատի, 1945 թ.
 40. Новые данные о времени разрушения Гинджи монголами. Известия Аз. филиала АН. наук СССР. Баку, 1943 г. № 7.
 41. Արմավիրի հուճարեն արձանագրությունները նոր լուսարանությանը, Երևան 1946 թ.
 42. Պատմական աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան 1945 թ.
 43. Проблема общественного строя доаршакидской Армении, изд. «Исторические записки» № 15. Москва, 1945 г. стр. 3—28.
 44. Դաննիի հուճարեն արձանագրությունը և Դաննիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946 թ.
 45. Цель и направление подготавливающегося Нероном кавказского похода, изд. «Вопросы истории» № 17, Москва, 1946 г. стр. 66—74.
 46. Когда и кем была составлена «Армянская география», приписываемая Моисею Хоренскому, «Византийский вестник» т. I. Москва, 1947 г.
 47. О местонахождении caspia Via u caspiae Porte «Исторические записки» № 25, Москва, 1948 г.
 48. Римско-византийские хлебные меры и основанные на них индексы хлебных цен, «Византийский временник», т. II, Москва, 1949 г.
 49. О градусных измерениях меридиана и земной поверхности по древне-армянским источникам, «Вестник древней истории» № 2, Москва, 1950 г.
 50. Маршруты персидских походов императора Гераклия. «Византийский временник», т. III, Москва, 1950 г.
 51. Новые заметки о греческой надписи в языческом храме Гарни, «Известия АН. н. Арм. ССР», № 4. Ереван, 1951 г.

